

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2015թ առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզխորհրդի հարգելի մասնակիցներ, մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2015թ. առաջին եռամսյակում մարզպետի կողմից ընդունվել են 26 որոշումներ, 41 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 43 հրամաններ, հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ:

2015թ առաջին եռամսյակում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 1492 և ելք են արվել 1858 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների հետ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում ներկայումս առկա են երեք թափուր քաղաքացիական ծառայության պաշտոններ աշխատանքներ են փարվում դրանց համալրման նպատակով:

2015թ ընթացքում արեստավորման ենթակա են 28 քաղաքացիական ծառայողներ, որից՝ 1-ը բարձրագույն պաշտոն զբաղեցնող, 10-ը գլխավոր պաշտոն զբաղեցնող, 9-ը առաջատար, իսկ 8-ը կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձինք են:

2015թ. հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երում մասնագիտական վերապատրաստում կանցնեն 24 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների ընդունմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2015թվականի առաջին եռամսյակում մարզպետի մոտ 379 քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել:

Եռամսյակի ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 34 դիմումներ, որից՝ 4-ը ստացվել են Զերմուկի, 12-ը Վայքի, 18-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2015թ առաջին եռամսյակին ընթացքում 218 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 45 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 8-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-

տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Մարզպետին ուղղված 379 դիմումներից դրական լուծում են ստացել 322-ը, անհիմն լինելու և մեր իրավասություններից դուրս լինելու պատճառաբանությամբ մերժվել են 36-ը, 21 դիմումների լուծումը ընթացքի մեջ է:

2015թ.1-ին եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 322 քաղաքացիներ, որից՝

| | |
|---|-----|
| 1. Դրամական օգնություն | 218 |
| 2. Նպաստի հարցերով | 1 |
| 3. Հողային վեճեր և սահմանների ճշտում | 8 |
| 4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով | 6 |
| 5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության | 5 |
| 6. Աշխատանքի տեղավորման | 12 |
| 7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր | 6 |
| 8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու | 45 |
| 9. Պետ.պատվերով բուժօգնություն | 8 |
| 10. Որդեգրման հարցերով | 2 |
| 11. Երեխաներին կրթության առանձնահատուկ պայման. մեջ ընդգրկելու | 9 |
| 12. Խնամնակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով | 2 |

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան